

*«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ  
«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ*



*ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՈՒ*

Գյումրի  
2010

***ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ***

«Աղետի գոտու անօթևանների իրավունքների պաշտպանություն,  
բնակարանների բաշխման գործընթացի՝ պայմանագրերի և  
հերթացուցակների հանրային մոնիթորինգ»

***ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ***

Անօթևանների իրազեկում բնակարանների բաշխման գործընթացի և  
իրենց իրավունքների մասին,  
անօթևանների շահերի և իրավունքների պաշտպանություն,  
բնակարանների բաշխման գործընթացի հանրային մոնիթորինգ և  
զեկույցի հրապարակում,  
բնակարանների բաշխման գործընթացի կատարելագործմանն ուղղված  
առաջարկությունների, ուղերձի պատրաստում և հանրայնացում:

***ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ***

ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի  
10 ամիս  
2009թ. դեկտեմբեր- 2010թ. սեպտեմբեր

***ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ԱՂԲՅՈՒՐԸ***

Ծրագիրը ֆինանսավորվում է Բաց հասարակության ինստիտուտի  
օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի  
դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

**Անօթևանների  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Շիրակի մարզում թեև առաջնային հիմնախնդիրը դեռևս համարվում է հազարավոր անօթևանների առկայությունը, սակայն երբևէ նրանց իրավունքների պաշտպանության և իրազեկման, հիմնախնդիրների հանրայնացման առումով ծրագրեր չեն իրականացվել: Նաև չի իրականացվել հանրային մոնիթորինգ՝ ուսումնասիրելու և պարզելու, թե աղետի գոտու անօթևանների հիմնախնդիրների լուծման նպատակով ինչ է արվում իշխանությունների կողմից, ինչպես են կազմվում անօթևանների հերթացուցակները, ում և ինչպես են բաժանվում բնակարանները: Քաղաքացիական հասարակության կառույցների կողմից երբևէ փորձ չի արվել ուսումնասիրելու վերը նշված հիմնախնդիրները և նման ուսումնասիրությունների հիման վրա չի պատրաստվել ու հանրայնացվել առաջարկությունների փաթեթ՝ աղետի գոտու անօթևաններին իշխանությունների կողմից մատուցվող ծառայությունների վիճակի և դրանցում անհրաժեշտ փոփոխությունների մասին:

**ՀԱՎԱՍՏԻԱՅՈՒՄՆԵՐ**

ՀՀ իշխանությունների հավաստիացումներով և համաձայն <<Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի>>՝ աղետի գոտու անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման վերջնաժամկետը 2013 թվականն է (ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան, 08.12.2008թ.):

2009-2011թթ., ՀՀ Կառավարության և <<Գլենդեյլ Հիլզ>> կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն, ՀՀ պետական բյուջեի միջոցներով միայն Գյումրիում կառուցվելու են 3030 բնակարան և սպասարկման օբյեկտների տարածքներ: ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009թ. N 21 հրամանով ստեղծված հատուկ հանձնաժողովի կողմից նորակառույց բնակարանները 2009-2013թթ. բաժանվելու են անօթևաններին, այդ թվում Գյումրիում մինչև 2010թ. Աշնանը բաշխվելու է շուրջ 1500 բնակարան (ՀՀ քաղաքաշինության փոխնախարար Կ. Գևորգյան, <<Արմենպրես>>, 14.02.2009թ.):

*Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948) \**

**Հոդված 25**

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:

*Եվրոպական սոցիալական խարտիա (1996)\**

**Հոդված 31**

Բնակարանի իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ուղղված.

1. պատշաճ չափանիշներով բնակարանների մատչելիության խթանմանը,
2. անօթևանության կանխմանն ու կրճատմանը՝ այն աստիճանաբար վերացնելու նկատառումով,
3. բնակարանի գինը բավարար միջոցներ չունեցողների համար մատչելի դարձնելուն:

*ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ\**

**Հոդված 34**

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

\* ոչ պաշտոնական հրապարակումներ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**(1999թ. N 432, փոփոխություններով և լրացումներով) \***

**ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԻՆ  
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՏԿԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

1...Սեփականության իրավունքով հատկացվող բնակարաններից մեկ տարվա ընթացքում արված առաջարկություններից հրաժարվելու դեպքում քաղաքացիները կորցնում են տվյալ բնակարանն ստանալու իրենց իրավունքը:

2. Բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն այն քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները (բնակարանը, բնակելի տունը, տան մի մասը) երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի:

3. Աղետի գոտու բնակավայրերում բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառումն իրականացնում է նրանց մշտական բնակավայրի համայնքի ղեկավարը:

4. Բնակարան ստանալու համար քաղաքացիները դիմումները ներկայացնում են ըստ բնակության վայրի՝ համայնքի ղեկավարին:

7...Հաշվառման վերցված քաղաքացիները, ինչպես նաև այն քաղաքացիները, որոնց մերժել են, մեկշաբաթյա ժամկետում այդ մասին գրավոր իրազեկվում են:

Համայնքի ղեկավարի որոշման հետ չհամաձայնելու դեպքում քաղաքացիները կարող են այն բողոքարկել դատարան:

Հրապարակայնությունն ապահովելու նպատակով հաստատված ցուցակները փակցվում են տեսանելի տեղերում:

12... Քաղաքացիները հաշվառումից հանվում են, եթե՝

ա) հաշվառման վերցված անձանց բնակարանային պայմանները բարելավվել են, որի կապակցությամբ վերացել են հաշվառման մեջ գտնվելու հիմքերը.

բ) հաշվառման վերցված անձինք մշտական բնակության են փոխադրվել այլ բնակավայր.

\* Տպագրված է կրճատումներով

զ) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու մասին ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Քաղաքացիներին հաշվառումից հանում է համապատասխան համայնքի ղեկավարը:

Քաղաքացիները հրավիրվում են այն նիստին, որտեղ քննարկվում է նրանց հաշվառումից հանելու հարցը:

## **II. ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՇԵՐԹ ՀԱՏՎԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

13. Պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները բաշխում և «հատկացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը» համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված հերթացուցակների համաձայն՝ դրանցում ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության արդյունքներով:

15 Բնակարանների բաշխման հրապարակայնությունն ապահովվելու նպատակով քաղաքացիներին բնակարան հատկացնելու մասին որոշումները հրապարակվում են տեղական մամուլում:

16. Բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են սույն կետով սահմանված նորմաների սահմաններում, սակայն վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցված բնակարանի սենյակների թվից ոչ ավելի:

Բնակելի տարածությունը հատկացվում է՝

1-սենյականոց բնակարանը՝ միննույն սեռի կամ տարբեր սեռի երկու մարդուց բաղկացած ընտանիքին, եթե երեխան ինը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին.

2-սենյականոց բնակարանը՝ ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու մարդուց (բացի ամուսիններից) և երեք մարդուց բաղկացած ընտանիքին.

3-սենյականոց բնակարանը՝ չորս-հինգ մարդուց բաղկացած ընտանիքին.

4-սենյականոց բնակարանը՝ վեց-յոթ մարդուց բաղկացած ընտանիքին:

4 և 5-սենյականոց բնակարան կորցրած քաղաքացիներին, որոնց ընտանիքները բնակարանի հատկացման պահին բաղկացած են ութ և ավելի մարդուց, կարող է հատկացվել 2 բնակարան: Ընտանիքներին մեկից ավելի բնակարան հատկացվելու դեպքում դրանք, հնարավորության դեպքում, տրվում են նույն մուտքում և նույն հարկում:

18. Աղետի գոտու բնակավայրերում արտահերթ բնակելի տարածությունները հատկացվում են հետևյալ հերթականությամբ՝

ա) երկրաշարժի հետևանքով 1-ին խմբի հաշմանդամ դարձած անձանց.

բ) երկրորդ համաշխարհային պատերազմի 1-ին խմբի հաշմանդամներին և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց.

գ) մանկությունից հաշմանդամ ունեցող ընտանիքներին.

դ) զինծառայողներից 1-ին խմբի հաշմանդամներին.

ե) աշխատանքի 1-ին խմբի հաշմանդամներին.

զ) երկրաշարժի հետևանքով լրիվ որբացած անչափահասներին.

է) կերակրողներից մեկին կորցրած՝ անչափահաս երեխա ունեցող, ինչպես նաև երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին.

ը) միայնակ ծերերին.

թ) միայնակ մայրերին.

ժ) որբ երեխա որդեգրած անձանց.

ժա) երկրաշարժի հետևանքով 2-րդ խմբի հաշմանդամ դարձած անձանց.

ժբ) երկրորդ համաշխարհային պատերազմի 2-րդ խմբի հաշմանդամներին և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց.

ժգ) աշխատանքի 2-րդ խմբի հաշմանդամներին.

ժդ) զինծառայողներից 2-րդ խմբի հաշմանդամներին.

ժե) երկրաշարժի հետևանքով զոհ ունեցող ընտանիքներին.

ժզ) որոշ ծանր քրոնիկ այն հիվանդություններով տառապող անձանց, որոնք թվարկված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հիվանդությունների ցանկում.

ժէ) «Հերոսուհի մայր» կոչմանն արժանացած մայրերին.

ժը) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված ռազմիկների ընտանիքներին.

ժթ) երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված կամ անհայտ կորած ռազմիկների (պարտիզանների) և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ընտանիքներին.

ի) երկրորդ համաշխարհային պատերազմի 3-րդ խմբի հաշմանդամներին և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց.

իա) պետական կամ հասարակական պարտականությունները կատարելիս կամ արտադրության մեջ դժբախտ պատահարի հետևանքով գոհված անձանց ընտանիքներին.

իբ) սահմանված կարգով հաստատված ցուցակի համաձայն աշխատանքի վնասակար պայմաններով աշխատանքում 10 և ավելի տարի բարեխղճորեն աշխատած բանվորներին ու ծառայողներին.

իգ) ԽՍՀՄ և Հայաստանի ազգային հերոսներին.

իդ) փառքի, աշխատանքային փառքի, «ԽՍՀՄ զինված ուժերում հայրենիքին ծառայելու համար» բոլոր երեք աստիճանի շքանշաններով պարգևատրված անձանց.

իե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ խեղճան կամ հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչված ռազմիկներին.

իզ) քաղաքացիական և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ու այլ մարտական գործողությունների ժամանակ գործող բանակի կազմում գտնված անձանց, քաղաքացիական ու երկրորդ համաշխարհային պատերազմների պարտիզաններին, ինչպես նաև մարտական գործողություններին մասնակցած մյուս անձանց.

իէ) այն քաղաքացիներին, որոնք նախկինում նշանակվել են միութենական և հանրապետական նշանակության անհատական կենսաթոշակներ.

իը) ընտանիքներին՝ երկվորյակներ ծնվելու դեպքում.

իթ) արտադրության ոլորտում 15 և ավելի տարի աշխատած բանվորներին ու ծառայողներին.

յ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Այն ընտանիքներին, որոնց վրա տարածվում են սույն կետի «Ժ», «Ժթ» և «իա» ենթակետերի գործողությունները, անդամների թվին են դասվում գոհվածի կամ անհայտ կորածի խնամքի տակ գտնվող անձինք, որոնց այդ կապակցությամբ կենսաթոշակ է վճարվում, ծնողները, ամուսինը, որը նորից չի ամուսնացել՝ անկախ նրա կենսաթոշակ ստանալուց, զավակները, որոնք իրենց ընտանիքները չունեն կամ թեև ունեն իրենց ընտանիքները, բայց հաշմանդամ են դարձել մինչև չափահաս դառնալը, ինչպես նաև իրենց ընտանիքներն ունեցող զավակները, որոնց երկու ծնողները գոհվել են կամ անհայտ կորել, կամ ունեցել են մեկ ծնող, որը գոհվել է կամ անհայտ կորել:



21. Կառուցված բնակելի տների բնակարանները քաղաքացիներին հատկացվում են դրանց շինարարության ավարտի փաստագրումից անմիջապես հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական աջակցություն ցուցաբերելու մասին համապատասխան պայմանագրի հիման վրա:

22. Սույն կարգի համաձայն բնակարանները հատկացվում են այն քաղաքացիներին, որոնք արտահերթ բնակարան ստանալու իրավունք ունեցել են մինչև 1999 թվականի հունվարի 1-ը:

### ***ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ***

Երկրաշարժից հետո մինչև 2003 թվականը բնակարանների բաշխումը իրականացվում էր Գյումրու քաղաքապետարանի, 2003-2008թթ. Շիրակի մարզպետի կողմից, ներկայումս ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ բնակարանների բաշխումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը:

ՀՀ քաղաքաշինության նախարարը բնակարանների հատկացման հանձնաժողովի նիստի որոշման հիման վրա իր հրամանով հատկացնում է բնակարաններ անօթևաններին:

Բնակարանների բաշխման հանձնաժողովը, որը ղեկավարում է ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանը, պարբերաբար ուսումնասիրում է բնակարաններ ստանալու հավակնող ընտանիքների փաստաթղթերը և փուլ առ փուլ ներկայացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարին հրամանագրելու նպատակով:

Անօթևանները հանձնաժողովի համապատասխան հայտարարությանը արձագանքելով պահանջվող փաստաթղթերը ներկայացնում են հանձնաժողովին աջակցող աշխատանքային խմբին, որը գործում է Գյումրիում՝ ***Գորկու 67, 3 հարկ*** հասցեում:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը հետևյալն է՝

Հ/Հ	Փաստաթղթերի անվանումը
1	Բնակարան ստացողի ընտանիքի անդամների անձնագրերի և ծննդյան վկայականների պատճենները
2	Ամուսնության վկայականի պատճենը
3	Ամուսնալուծության վկայականի պատճենը
4	Հայրության ճանաչման վկայականի պատճենը
5	Միայնակ մոր տեղեկանքի պատճենը
6	Մահվան վկայականի պատճենը
7	Ընտանիքի բացակա անդամի կողմից տրված լիազորագրի պատճենը
8	Միասնական օրդերի պատճենը
9	ԳԲՍ ՓԲԸ տեղեկանք
10	Տեղեկանք ժամանակավոր բնակության վայրից
11	Կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցում ստանալու վերաբերյալ տեղեկանքի պատճենը
12	Դատարանի վճռի պատճենը
13	Քաղվածք 17(18) ձևից
14	Արտոնությունը
15	Քաղվածք՝ 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաշվառված երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակից
16	Քաղվածք՝ աջակցություն ստանալուն հավակնող անձանց մշտական բնակության մասին ՀՀ Ոստիկանության պետական կոմիտեի հետ ճշտված տեղեկատվությունից
17	Քաղվածք՝ աջակցություն ստանալուն հավակնող անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակարանի (բնակելի տան) առկայության մասին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ ճշտված տեղեկատվությունից
18	Այլ փաստաթղթեր

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն **«Աղետի գոտու անօթևանների իրավունքների պաշտպանություն, բնակարանների բաշխման գործընթացի՝ պայմանագրերի և հերթացուցակների հանրային մոնիթորինգ»** ծրագրի շրջանակներում անօթևաններին բնակարանների բաշխման գործընթացի վերաբերյալ տրամադրում է իրավաբանական անվճար խորհրդատվություն: Բնակարանների բաշխման գործընթացին առնչվող հարցերով **մեզ կարող են դիմել՝ այցելելով մեր գրասենյակ մինչև սույն թվականի փետրվարի 25-ը՝ Տիգրան Մեծի 202., բն.5, այնուհետև՝ Վարպետաց 176 հասցեներով**, կամ հարցեր հղել մեր էլեկտրոնային հասցեներով և օնլայն տարբերակով՝ [www.shirakc.org](http://www.shirakc.org) վեբ-կայքի միջոցով:

Ծրագրի ղեկավար՝ Վահան Թումասյան  
Ծրագրի համակարգող՝ Աիդա Խաչատրյան  
Աշխատանքային խումբ՝ Ն.Թումասյան, Գ. Մկրտչյան, Մ. Գրիգորյան  
Լուսանկարիչ՝ Հայկ Բարսեղյան:  
Լուսանկարներում՝

1-ին էջ՝ Գյումրիի Ամենափրկիչ եկեղեցու բակում կանգնեցված  
**«Երկրաշարժի զոհերի հուշարձանը»**,  
վերջին էջում՝ **«Գյումրու տնակային ավանների քարտեզը»:**

**«Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման  
«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ**  
Շիրակի մարզ, 3101, Գյումրի  
Վարպետաց 176  
հեռ. +(374 312) 6-69-92  
+(374 91) 45-13-37  
Էլ. փոստ՝ [shirakcentre@rambler.ru](mailto:shirakcentre@rambler.ru),  
[shirakcentre@yahoo.com](mailto:shirakcentre@yahoo.com)  
Վեբ կայք՝ [www.shirakc.org](http://www.shirakc.org)



**Տեղեկատուն պատրաստվել է**  
**«Շիրակ կենտրոն» ՀԿ կողմից, ԲՀԲՕՀՀՄ-ի ֆինանսական աջակցությամբ:**  
**Տեղեկատուի բովանդակության համար պատասխանատու է «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն և այն չի կարող համարվել ԲՀԲՕՀՀՄ-ի դիրքորոշումը:**

M 1:10000

